



ՍՈՒՐԲ ԵՊԻՊԻՊՈՒԹՈՒՆ ՏՆՅԱՍՏՆԵԿՅՈՅ ԵԿԵՂԵՑԻ
 HOLY TRINITY ARMENIAN CHURCH

RIGHT REV VAZKEN KESHISHIAN, RECTOR
 RECTOR'S OFFICE 964-3286

PARISH OFFICE 924-6514
 AUDITORIUM 923-0081

Պատուարժան
 Կարչութիւն ՀԵՆԿԱ-ի
 Թորոնթօ

ՄԱՐՏ 14, 1980

Նկատի ունենալով Եկեղեցւոյս յարմարութիւններու յարատեւ գործածութիւնը եւ իրերահասկացողութեամբ համադրելու համար բոլոր կազմակերպութիւններու գործունէութիւնները. համեմատելով կանխաւ վերապահել Եկեղեցւոյս քարտուղարութեան հետ այն պարագային որ յարմարութիւնները պիտի չգործածէք ձեր վերապահած թուականին սարսիւր թեղեկացնել քարտուղարութեան վերապահութիւնը ջնջելու համար. որպէսզի այդ ձեւով ալ Եկեղեցւոյ յարմարութիւնները վարձքով տրամադրելի ըլլան արտա-Եկեղեցական կազմակերպութիւններու կամ անհատներու գործածութեան համար:

Կը կրկնենք, այս կարգադրութիւնները միշտ կատարեցէք Եկեղեցւոյս քարտուղարութեան հետ եւ ոչ թէ ծխական Խորհուրդի անդամներուն հետ:

Թուականներու վերապահութեան Տոմարին մէջ արձանագրութիւն կատարելը բոլորովին արգիլուած է. Տոմարի գործածութիւնը վերապահուած է պաշտօնէութեան եւ ծխական Խորհուրդիս:

Բոլոր ժամանակներու ծխական Խորհուրդի գրասենեակը վերապահուած է պաշտօնէութեան եւ ծխական Խորհուրդի անդամներուն, գրասենեկային աշխատանքներու եւ մասնաւոր հանդիպումներու համար. այլապէս մուտքը արգիլուած է:

Եկեղեցւոյս յարմարութիւններու հեշտ մատակարարութիւնը եւ կալուածի ընդհանուր մաքրութիւնը վստահ ենք որ ձեզի համար եւս առաջնահերթ կարեւորութիւն ունի. ուստի կը շեշտենք սրահի կամ խոհանոցի գործածութենէն ետք քծանալը որքէն դասաւորել սեղանները, աթոռները եւ պիտոյքները մաքրելով եւ մասնաւոր տոպրակներու մէջ գետեղելով աղբերը: Ամէն առթիւ բոլոր լոյսերը եւ մուտքի դռները փակել, ապահովելու համար կալուածի մշտական ապահովութիւնը. որպէսզի լաւագոյն, մտաշելի եւ օրինակելի երեւոյթով ներկայանանք համայնքիս անդամներուն առջեւ: Համեմատելով վերոյիշեալը հաղորդել ձեր անդամներուն առ ի գիտութիւն եւ գործադրութիւն. Ձեր համագործակցութեան համար կը յայտնենք մեր շնորհակալութիւնները:

Ի ԴԻՄԱՑ
 Ս. ԵՐՐՈՐԴ. ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՒՅ
 ԿԱՐԻՉ ԲԱՐՏՈՒՂԱՐ

(Signature)
 ՀԱՊԵՊ ԹՈՐՈՍԵԱՆ